ԱԼԵՔՍԱՆ ՅԱԿՈԲԻ ՅԱԿՈԲԵԱՆԻ (ՀՀ ԳԱԱ ԱՐԵՒԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՐԵՒԵԼՔ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ, Պ. Գ. Դ.)
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ (CURRICULUM VITAE)

Ծնուել է 1955 թ. Հոկտեմբերի 11-ին Երեւանում:

1962-1972 թթ. սովորել է Երեւանի հ^{մր} 46 եւ 144 միջնակարգ դպրոցներում (7 տարի եւ 3 տարի):

1972-1973 թթ. 1 տարի աշխատել է Երեւանի «Հայգորգ» ֆիրմայում՝ որպէս օժանդակ բանուոր:

1973-1978 թթ. ուսանել է Երեւանի Պետական համալսարանի Պատմութեան ֆակուլտետում եւ ստացել աւարտական կարմիր դիպլոմ՝ «Հայ ժողովրդի պատմութիւն» մասնագիտացմամբ: Դիպլոմային աշխատանքը նուիրուած է Հռանդէայի պայմանագրին (Ք. յ. 62 թ.):

1978 թ. Յունիս-Սեպտեմբեր ամիսներին յետբուհական ճամբարային զինուորական ծառայութիւն է անցել Սովետաշէնի (Նուբարաշէնի) գնդում եւ ստացել կրտսեր սպայական կոչում:

1978 թ. Սեպտեմբեր-Նոյեմբեր ամիսներին աշխատել է Հայաստանի ազգագրութեան թանգարանում (Սարդարապատ)՝ որպէս գիտաշխատող:

1978-1981 թթ. ուսանել է ԽՍՀՄ Գիտութիւնների ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) բաժանմունքի ասպիրանտուրայում եւ աւարտել այն «Աղբիւրագիտութիւն եւ պատմագրութիւն» մասնագիտացմամբ:

1982-1990 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտում՝ որպէս Կովկասագիտութեան եւ բիւզանդագիտութեան բաժնի աւագ լաբորանտ, կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող եւ աւագ գիտաշխատող:

1985 թ. Յունուարին Երեւանում պաշտպանել է ««Աղուանք» եւ «աղուաններ» եզրոյթները յունա-լատինական եւ հայկական աղբիւրներում /Սեմանտիկ վերլուծութիւն/» (ռուսերէն) գիտական թեզը (գիտական ղեկավար՝ պ. գ. դ. Կարէն Իւզբաշեան) եւ ստացել պատմական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճան: Պատմական գիտութիւնների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախօսութիւնը «Բուն Աղուանքի եւ Հայոց Արեւելից կողմանց իշխանատոհմերը եւ արքայատոհմերը Թ-ԺԳ դարերում /Պատմա-աղբիւրագիտական քննութիւն/» թեմայով պաշտպանել է Երեւանում 2014 թ. Սեպտեմբերին:

1988-1990 թթ. եղել է Արցախեան համազգային շարժման ղեկավարներից մէկը որպէս «Ղարաբաղ» կոմիտէի անդամ: 1988-ի Դեկտեմբերից մինչեւ 1989-ի Ապրիլի վերջ

բանտարկուած է եղել Սովետաշէնի (Նուբարաշէնի) եւ Մոսկուայի («Մոտրոսսկայա տիշինա») բանտերում:

1990 թ. Սեպտեմբերին ընտրուել է ՀՀ Գերագոյն խորհրդի պատգամաւոր եւ (վերընտրուելով 1995, 1999 թթ.) ՀՀ Ազգային ժողովի պատգամաւոր է եղել մինչեւ 2003 թ. Մայիս: Եղել է խորհրդարանի Անկախ պետականութեան հաստատման, ապա՝ Պաշտպանութեան, ներքին գործերի եւ ազգային անվտանգութեան յանձնաժողովների անդամ):

1990-1991 թթ. աշխատել է որպէս ՀՀ կառավարութեանն առընթեր Փախստականների պետական կոմիտէի նախագահ: 1993-2004 թթ. համատեղութեամբ աշխատել է նաեւ Արցախում՝ որպէս ԼՂՀ Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավար:

2005 թ. Յունուարից աշխատում է ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան ինստիտուտի Քրիստոնեայ Արեւելք բաժնում՝ որպէս ավագ գիտաշխատող եւ գլխաւոր գիտաշխատող, իսկ նոյն տարուայ Փետրուարից՝ այդ բաժնի վարիչ: Համատեղութեամբ կատարել է «Մատենագիրք Հայոց» մատենաշարի Գ-Ե հատորների գլխաւոր խմբագրի պարտականութիւնները: Խմբագրել է նաեւ երկու տասնեակից աւելի գիտական մենագրութիւններ եւ ժողովածոներ: Ղեկավարել է թեկնածուական ատենախօսութիւն պաշտպանած երկու ասպիրանտների: 2012-2016 թթ. համատեղութեան կարգով դասաւանդել է ԵՊՀ Պատմութեան ֆակուլտետի մագիստրատուրայում:

1981-2022 թթ. հրատարակել է ինը տասնեակից աւելի գիտական աշխատանքներ, այդ թւում՝ 1987-ին՝ «Ալբանիա-Աղուանքը հունա-լատինական եւ հայկական աղբիւրներում» (ռուսերէն), 2009-ին՝ «Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ /Արցախ եւ Ուտիք/» («Ազգային գրադարան» շարքի թիւ 241), եւ 2020-ին՝ «Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ դար /Պատմա-աղբիւրագիտական քննութիւն/» («Ուռենի» հայագիտական մատենաշարի թիւ 2) մենագրութիւնները: 2022 թ. Օգոստոսին ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւնում լոյս կը տեսնի «Ալբանիա-Աղուանքը հունա-լատինական եւ հայկական աղբիւրներում: Երկրորդ, լրամշակուած հրատարակութիւն» ռուսերէն մենագրութիւնը: Մասնակցել է մօտ մէկ տանեակ կոլեկտիւ մենագրութիւնների բաժինների պատրաստմանը: Հրատարակել է մօտ երկուսուկէս տասնեակ հայ մատենագրական երկերի գիտա-քննական բնագրեր:

Գիտական յօդուածները եւ հայ մատենագիրների գիտա-քննական բնագրերը հրատարակուել են «Պատմա-բանասիրական հանդէս», «Լրաբեր հասարակական գիտութիւնների», «Բանբեր Մատենադարանի», «Էջմիածին», «Բանբեր հայագիտության», «Բանբեր Արեւելագիտության ինստիտուտի», «Հիմնարար հայագիտութիւն», «Հանդէս ամսօրեայ», «Բազմավէպ», «Կաւկասիկա» (ռուսերէն), «Խորհրդային ազգագրութիւն» (ռուսերէն) պարբերականներում, «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», «Կովկաս եւ Բիւզանդիա» (ռուսերէն), «Հայաստանը եւ արեւելաքրիստոնեական քաղաքակրթութիւնը», «Ալբանիա-Կաւկասիկա» (ռուսերէն), «Արեւելեան աղբիւրագիտութիւն» եւ այլ ժողովածոներում, «Մատենագիրք Հայոց» մատենաշարում:

Մասնակցել է մի շարք միջազգային գիտաժողովների Երեւանում, Մոսկուայում (1981, 2008, 2015, 2018), Սանկտ Պետերբուրգում (1983, 1996, 2001, 2018), Թբիլիսիում (1987), Քեմբրիջում (ԱՄՆ, 2005), Ստեփանակերտում (2002-2021), Փարիզում (2008, 2009), Աշգաբադում (2007, 2013), Մայնի Ֆրանկֆուրտում (2016):

Տիրապետում է օտար լեզուների՝ ռուսերէն, անգլերէն, ֆրանսերէն:

Պարգեւատրուել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանով եւ «Մխիթար Գօշ» մեդալով, ինչպէս նաեւ ՀԱԵ Արցախի թեմի «Ջալալեան բարեպաշտ իշխանի» շքանշանով եւ ՀՀ ԳԱԱ նախագահութեան պատուոգրերով:

«Հայ ազգային կոնգրես կուսակցութեան» անդամ է:

Ամուսնացած է, ունի 4 երեխայ եւ 6 թոռնիկ:

18.07.2022